

Է

Երջանիկ հաւոյդ իմոյ պատուականի, և սրբակենցաղ Քրիստոսապօսակ Հայրապետի Տեառնդ իմոյ Իսրայէլ սրբազան Վ. . . ի առ որս մատուցցի համբոյր, Աստուածածած Սրբոյ աջոյդ հանգերձ խոնարհական գիւօր:

ՎԵՃԻ

«Զկնի թղթոյս ծառայականի, յայտարարութիւն լիցի, քոյինդ երջանկի գի թէ կամք լիցի հրամանոցդ իմանալ որպիսութիւնն մեր գոհութիւն ամենագօրին Աստուծոյ, քոյին սուրբ և մաքուր աղօթիւքն կամք ողջ անդամօք, առ ի սպաս մեծի տեառնդ իմոյ, որ և յարածամ հայցեմ ի Արարչէն Աստուծոյ, տացէ հրամանոցդ՝ կեանս անդորրականս և անսպառ ուրախութիւնս նաեւ միշտ վայելումն Աստուածապարգեւ իշխանութեանրդ : Ամէն :

Արդ գի տէրդ իմ, գի միշտ ամօթով եմ ի քէն, հրամանոցդ շափաղաթն անգրաւէ ի քերայ նուաստիս, հոգւով չափ շնորհակալ եմ ի քէն մինչ ցմահ, գի նախ Մուսկուր և Դարբանդու նուիրակութիւնն որ շափաղաթ էիր արել մեզ, յոյժ շնորհակալ եմ, բայց կամէի յգել հրամանոցդ, քանզի յոյժ ամօթ կրէի ի քէն, առնուլ ի նմանէ ըստակ մի. իսկ այժմոյս, յորժամ չուեցայ ի քաղաք, որ աստից ելանիցեմ ի յերկիր շըրջելոյ, սակս մնալոյն իմոյ, անջար. եթէ լիցի հրամանոցդ աղօթիւքն ի ձեռաց պարտատիրաց գերծանիմ, բայց գի ոչ ունի վարայ մի ձեռաց խարջի, որ յերկրի մեծամեծաց, ընծայ սունէի, հրամանոցդ էլ յայտնի է որ առանց ընծայի յերկիր չի լինիլ գնալ, և վասն այս էրի, յոյժ ամօթ կրէի կրկին առնուլ պարտս և յամբարել ի վերայ բազմազուն պարտուց իմոյ և սպաշառեալ խորհէի զայս ի միտս իմ տեսայ անկարծ Տէր Սաղաթէն, հանգերձ ժողովեալ նուիրակութեամբն. այսմ կետի ժամանեաց առ մեզ. գամենայն հոգս ի բաց ընկեցաք, էր